Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«08» 01 2025թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «13» 01 2025թ.
N 1-25 նիստում, խորհրդի նախագահ՝ _____ Ս. Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

<<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) կողմից իր շահակիցներին և հասարակությանը տեղեկատվության ապահովման նպատակն է քոլեջի բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրել քոլեջի գործունեության, ձեռքբերումների, միջոցառումների և գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն, հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ապահովել քոլեջի կապը իր շահակիցների և հասարակության հետ:

Այս առումով քոլեջի խնդիրն է շահակիցների տեղեկացումը և նրանցից հետադարձ կապի միջոցով ստացված արձագանքի ուսումնասիրությունը և դրա հիման վրա կրթական գործունեության և ուսումնական գործընթացի բարելավումը:

Քոլեջում շահակիցների և հասարակության տեղեկացման հիմնական եղանակներն են՝

- քոլեջի գործունեության լուսաբանումը քոլեջի ֆեյսբուքյան պաշտոնական էջում,
- <<Կրթություն>> շաբաթաթերթում հրապարակումների իրականացումը,
- <<Արաքս>> հրատարակչությունում քոլեջում առկա մասնագիտությունների և ընդունելության տեղերի մասին հրապարակումները,
- տպագրված նյութերը (բուկլետներ),
- շահակիցների հետ կազմակերպվող հանդիպումները,
- տարեկան և ընթացիկ հաշվետվությունները:

Քոլեջի ֆեյսբուքյան պաշտոնական էջը հանդիսանում է շահակիցների և հասարակության տեղեկացման հիմնական գործիք, որը պետք է ապահովի ինֆորմացիայից օգտվելու հարմարավետությունը: Շահակիցներին տեղեկացման արդյունքում քոլեջը ֆեյսբուքյան էջում հետադարձ կապի միջոցով նրանցից ստանում է արձագանք, որը հաշվի է առնվում քոլեջի գործունության բարելավման ուղղություններն ու միջոցառումները կազմակերպելիս:

Շահակիցների և հասարակության տեղեկացման գործունեության իրականացման ուղղություններն են՝

- քոլեջի հասարակական դերը,
- քոլեջի ձեռքբերումները,
- կրթական ծրագրերի բովանդակության ներկայացումը,
- ընդունելության կարգի, պայմանների, առկա մասնագիտությունների և տեղերի մասին իրազեկումը,
- ուսումնական գործընթացում ուսանողների ձեռքբերումները,

- դասախոսական անձնակազմի ձեռքբերումները,
- ներքոլեջային և արտաքոլեջային տարատեսակ միջոցառումները,
- մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացումը (հանդիպումներ Չարենցավան քաղաքի և հարակից գյուղերի դպրոցների աշակերտների հետ, սեմինարներ ուսանողների հետ) և այլն:

Շահակիցների և հասարակության տեղեկացման աղբյուր կարող են հանդիսանալ նաև քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումները՝

- տնօրենությունը,
- կադրերի և գործավարության բաժինը,
- ընդունող հանձնաժողովը,
- որակի ներքին ապահովման կենտրոնը,
- կարիերայի կենտրոնը,
- ամբիոնները,
- դասախոսական կազմը:

Շահակիցների և հասարակության տեղեկացվածության ապահովման նպատակներն են՝

- քոլեջի գործունեության տեղեկատվության կառավարումը,
- քոլեջի գործունեության վերաբերյալ հասարակության լայն շերտերին տեղեկատվություն տրամադրումը,
- քոլեջի գործունեության թափանցիկության և հասանելիության ապահովումը,
- քոլեջ-հասարակություն կապի ձևավորումը,
- քոլեջի և ներքին ու արտաքին շահակիցների միջև կապի ամրապնդումը,
- քոլեջի մասին հասարակական դրական կարծիքի ձևավորումը,
- քոլեջի մրցակցային առանձնահատկությունների բարձրացումը,
- հետադարձ կապի միջոցով շահակիցների կարծիքները, առաջարկները, դիտարկումները և կարիքները բացահայտելը:

Շահակիցների և հասարակության տեղեկացվածության ապահովման խնդիրներն են՝

- աշխատանքային վարկանիշի ձևավորում,
- ներքին և արտաքին շահակիցներին հավաստի և օբյեկտիվ ինֆորմացիայի տրամադրում,

- քոլեջի դասախոսական անձնակազմի և ուսանողների հետ միջոցառումների կազմակերպում և անցկացում,
- ԲՈՒՀ-երի, կազմակերպությունների և ձեռնարկությունների, երիտասարդության հետ համագործակցության հաստատում:
- ուղիղ և հետադարձ կապի իրականացում: